ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Գ. ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Երիցյան.

Ի պատասխան Ձեր 14.06.2019թ. հ.01/276 գրության՝ տեղեկացվում է, որ 2019թ. աշխատանքային ծրագրով նախատեսված է 17.5մլն ՀՀ դրամ գումարի շրջանակներում՝ 175 թեքահարթակի և կույրերի ու տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար 50 տեղում դեղին գույնի գոգավոր սալիկների կառուցման աշխատանքներ: Ըստ կապալի հ.ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/5 պայմանագրի՝ շինարարական աշխատանքների ավարտ է սահմանված 01.08.2019թ.:

Ընթացիկ տարվա 1-ին կիսամյակի ընթացքում հենաշարժողական խնդիրներ և սահմանափակ կարողություններ ունեցող քաղաքացիների համար մատչելի պայմաններ ապահովելու, նրանց տեղաշարժը դյուրին և անվտանգ դարձնելու նպատակով մայրաքաղաքի Կենտրոն և Նոր Նորք վարչական շրջանների փողոցների խաչմերուկներում, բանուկ մասերում, հասարակական վայրերում և հանգստի գոտիներում կառուցվել է 24 հատ թեքահարթակ և վերանորոգվել է 5-ը:

Թույլ տեսողություն ունեցող անձանց համար Կենտրոն և Նոր Նորք վարչական շրջանների 12 հասցեներում տեղադրվել են դեղին գույնի գոգավոր սալիկներ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթի արդյունքում, տնտեսված գումարների հաշվին, 2019թ. ընթացքում կկառուցվի ևս 65 թեքահարթակ:

Ընդհանուր առմամբ, 2013թ. սկսած, Երևանի քաղաքապետարանի ծրագրերով և մասնավորի հետ համագործակցության արդյունքում, մայրաքաղաքում կառուցվել է թվով 2547 թեքահարթակ և կույրերի ու տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար դեղին գույնի գոգավոր սալիկներ՝ 145 տեղում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ